ջիկներով եւ փոքրիկ, ընկուզածեւ զանգակներով: Ամէն մի քարաւանապետ մի առանձին պարծանքով է զարդարում իր գրաստները, մանաւանդ, երբ քարաւանը մօտենում է մի նոր քաղաքի, կամ դուրս է գալիս քաղաքից: Եւ այդ պճնասէր անասունները այն աստիճան սովորած են իրանց զարդարանքներին ու զանգակներին, որ եթէ զանգակներ չունենան, լաւ չեն գնայ:

Երբ հարիւրաւոր անասուններ շարժւում են, շրջակայ լեռները, բլուրները դղրդում են զանգակների խլացնող ձայնից: Նրանց քայլերի չափով՝ հնչիւնները պահպանում են մի առանձին ներդաշնակութիւն, որ խիստ կախարդիչ տպաւորութիւն է գործում, մանաւանդ գիշերային լռութեան պահուն, երբ քարաւանը գնում է ամայի ձորերի միջով:

Բոլորի առջեւը ընկած, միայնակ գնում էր «փիշանգը»՝ քարաւանի առաջնորդը: Դա մի սպիտակ, ամեհի ջորի էր, հզօր կուրծքով եւ գեղեցիկ գլխով: Իր հետեւողներից որոշւում էր նա իր աւելի շքեղ զարդարանքներով, որ կազմուած էին թանկագին իրեղէններից: Նա ջորիների արքան էր. նա ազատ էր բեռնից. նա միայն առաջնորդում էր:

Նայելով այդ խելացի անասունի վրայ, ես մտածում էի. որքա՜ն լաւ կը լինէր, եթէ այդ երկրի առաջնորդները կամ նրա կառավարիչները այդպէս բարեխիղճ կերպով կատարէին իրանց պաշտօնը, որպէս այդ սպիտակ ջորին...

«Փիշանգը» արժանի է նկարագրութեան: Լինում է ձմեռ, թանձր ձիւնը ծածկում է ճանապարհների բոլոր շաւիղները, բոլոր հետքերը: Դարուփոսեր հաւասարւում են, եւ առջեւում դրած է ձիւնային ընդարձակ, հարթ տարածութիւն: Նեղ հորիզոնը միախառնւում է մառախլապատ երկնքի հետ: Դէպի ամէն կողմ նայում ես, ոչինչ չես տեսնում: Ճանապարհը նշաններ չունի. ո՞ւր պէտք է նալ: Ցուրտը սառեցնում է, եւ կատաղի քամին ձիւնային թանձր փոշին պտտեցնում է օդի մէջ: Սարսափելով մտածում ես՝ ահա ամբողջ քարաւանը կը կորչի, կանյետանայ սպիտակ թանձրութեան ներքոյ: Անապատի միջով գնալիս քամին, մրրիկը նոյն գործողութիւնն են կատարում աւազի հետ, որպէս ձմեռը ձիւնի հետ: Բոլոր ճանապարհները ծածկւում են աւազի ներքոյ: Դէպի երկինք նայում ես՝ աւազ, դէպի գետին՝ աւազ, աւազային մոխրագոյն փոշին լցրել է ամէն տեղ: Այդ տագնապի եւ ճգնաժամի միջոցներում օգնութեան է հասնում «փիշանգը: Նա, որպէս մարմնացած բնազդում, գիտէ ուղիղ ճանապարհը, որքան էլ ծածկուած լինէր ձիւնի կամ աւազի ներքոյ: Իր հզօր կուրծքով պատառում է նա ձիւնը եւ քարաւանը առաջ է տանում: Ամէն ինչ սառել է, մարդկանց աչքերի թերթերունքից անգամ կախ են ընկած սառցային լուլաներ: Բայց նրա մարմինը պատած է սպիտակ փրփուրով, եւ